Սրբազան Պատարագի արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն և հյուրասիրություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետին Ս. Ծննդյան շնորհավորանքներ հայտնեցին հրավիրյալները:

Ս. Պատարագի և Ջրօրհնեքի ողջ արարողությունը ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության Ազգային հեռուստատեսությամբ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ԱՆԴԱՄ ՖՈԼՔԵՐ ՌՅՈՒՀԵԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 10 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի ՔԴՄ/ՔՍՄ խմբակցության փոխնախագահ Ֆոլքեր Ռյուհեին՝ Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլքեր Ջայթցի ընկերակցությամբ:

Ողջունելով հյուրերի այցը 1700-ամյա հայոց հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ այս տարին հոբելյանական է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար՝ առանձնահատուկ ուրախությամբ նշելով նաև, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մեծ տարեդարձը տոնվում է հայրենի երկրի անկախության պայմաններում: Միաժամանակ Վեհափառ Հայրապետը անդրադարձավ հայրենական կյանքում առկա դժվարություններին ու խնդիրներին՝ նշելով, որ ամեն տեսակի դժվարություն հայ ժողովուրդը հաղթահարում է վճռականությամբ, հավատքով ու բարեկամ ժողովուրդների աջակցությամբ:

Ի պատասխան հյուրերին հետաքրքրող հարցերի, Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայաստանի անկախացումից հետո հոգևոր-կրոնական կյանքին, Հայ Եկեղեցու ներկա կացությանը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ խորհրդային անաստվածության տարիներից հետո համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմամբ Հայ Եկեղեցին վերագտնում է սեփական տեղն ու դերը իր ժողովրդի կյանքում: